# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Ծաղկունք, (0261)61104, (077)160052,
tsaghkunq.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 11

### ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Բարձրավոլտ էլեկտրացանցեր,, փակ բաժնետիրական ընկերությունը Ծաղկունք համայնքի բնակիչներից սեփականության իրավունքով ձեռք է բերել Ծաղկունք համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության 3 միավոր վարելահող 1366 ք/մ մակերեսով՝ ըստ հետևյալ կադաստրային ծածկագրի 05-047-0140-0066, 05-047-0142-0095, 05-047-0142-0093:

Հողամասերի ձեռք բերման հիմնական նպատակը Իրան-Հայաստան 400ԿՎ երրորդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի շինարարության ծրագրով նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյունների կառուցումն ու սպասարկումն իրականացնելն է:

Վերը նշված ծրագրերով հողամասերում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է նշված գյուղատնտեսական նշանակության հողամասերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների հողերի կատեգորիայի:

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի դրույթով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հիմք ընդունելով 20.11.2008թ. ,, Իրան-Հայաստան 400ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի ծրագծի մասին,, N1334 -Ն որոշման պահանջները, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքի վարչական սահմաններում գտնվող ,,ԲԵՑ,, ՓԲԸ սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական 05-047-0140-0066, 05-047-0142-0095, 05-047-0142-0093 կադաստրային ծածկագրերով

վարելահողը՝ 1366 ք/մ մակերեսով, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների հողերի կատեգորիա՝ Իրան - Հայաստան 400ԿՎ երրորդ էլեկտրահաղորդման օդային գծի և համապատասխան ենթակայանի շինարարության ծրագրով նախատեսված բարձրավոլտ էլեկտրական հենասյուների կառուցման ու սպասարկման համար:

2. Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու ՀՀ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՀՈՎԻԿ

2. ԲԱԴԱԼՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

3. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՏՅՈՄ

4. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՌՈԼԱՆԴ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՏԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ**